03 հուլիսի, 2017թ. ք. Երևան

ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ նոր օրենքի մանրամասները. Իրավաբանների հայկական ասոցիացիան լրացուցիչ դասընթացներ անցկացրեց Երևանում, Արմավիրում և Չարենցավանում

ՀԿ-ները հնարավորություն կունենան ուղղակի կերպով զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ. նախկինում նրանք հիմնում էին ՍՊԸ-ներ և այդ ընկերությունների միջոցով նման գործունեություն ծավալում: «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ նոր օրենքին նվիրված դասընթացների ընթացքում օրենքի այս և այլ նոր իրավական կարգավորումները ներկայացրեց Իրավաբանների հայկական ասոցիացիայի նախագահ (ԻՀԱ) Կարեն Զադոյանը, ինչին հաջորդեցին ակտիվ քննարկումները դասընթացի մասնակիցների և բանախոսի միջև:

2017 թ. հունիսի 23-ից 29-ը ԻՀԱ-ն անցկացրեց ՀԿ-ների համար անվճար դասընթացների 2-րդ փուլը (3 դասընթաց Երևանում և մեկական դասընթաց Արմավիր և Չարենցավան քաղաքներում):

Մասնավորապես, եթե հասարակական կազմակերպություն (ՀԿ) հիմնադրելիս ՀԿ-ն թույլ է տվել օրենքի էական խախտում կամ կեղծիք, ապա դա հիմք է, որպեսզի Պետական եկամուտների կոմիտեն դիմի դատարան ՀԿ-ի գործունեությունը կասեցնելու պահանջով: Ներկաներին Կ. Զադոյանը խորհուրդ տվեց կանոնադրության մեջ հստակ սահմանել այն դեպքերը, թե որ հիմքերով կարող է հեռացվել ՀԿ անդամը: *«Այս հանդիպմանը նոր հանգամանքներ են մեզ համար բացահայտվել, մասնավորապես այն, որ ՀԿ-ներն իրավունք ունեն արդեն ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվել, կամավորներ ընդգրկել: Նոր օրենքով նաև պետական լիազոր մարմինն է փոխվել, դարձել է Պետական եկամուտների կոմիտեն, նախկինում Արդարադատության նախարարությունն էր»*, - նշեց դասընթացի մասնակից, Համայնքների ֆինանսիստների միավորման փորձագետ Վահե Սարգսյանը: Ավելացնենք, սակայն, որ կան խնդրահարույց նորմեր՝ կապված ՊԵԿ-ին ներկայացվող հաշվետվությունների, ծառայությունների մատուցման դեպքում հարկման և այլ հարցերի հետ:

Կարեն Զադոյանը նշեց, որ ռիսկեր կան՝ կապված անմիջական ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու հետ: Նա ՀԿ ներկայացուցիչներին զգուշացրեց, որ ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտները պետք է ուղղվեն բացառապես ՀԿ-ի կանոնադրական նպատակների իրականացմանը և ենթակա չեն անդամների կամ ղեկավար կազմի մեջ բաշխվելուն: Նրա խոսքով՝ մինչև 2017 թվականի վերջը ձեռնարկատիրական ընկերությունները շահութահարկի ռեժիմով կարող են հարկվել, եթե ունեն մինչև 115 միլիոն դրամի շրջանառություն, իսկ ահա ՀԿ-ների դեպքում այդ շեմը ներկայումս մինչև 58,35 միլիոն դրամ է սահմանված: Նոր հարկային օրենսգրքով ձեռնարկատիրական կազմակերպությունների համար էլ շեմը կիջեցվի մինչև 58,345 միլիոնի, սակայն մինչ այդ առկա է անհավասար մոտեցում ՀԿ-ների և բիզնես կազմակերպությունների միջև: Հայաստանի ՓՄՁ հաշվապահների ասոցիացիայի նախագահ Վահագն Համբարձումյանը նշեց, որ ՀԿ-ները մինչև 58,34 միլիոն դրամ շրջանառություն ունենալու դեպքում կհարկվեն շահութահարկի ռեժիմով, իսկ դրանից նույնիսկ 1 դրամ ավելի շրջանառություն ունենալու դեպքում հարկվելու են նաև ԱՀՀ ռեժիմով:

2016 թվականի դեկտմբերի 16-ին Ազգային ժողովն ընդունեց «Հասարակական կազմակերպությունների մասին» նոր օրենքը, որն ուժի մեջ մտավ 2017 թ.-ի փետրվարի 4-ին: Դրանով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել՝ ՀԿ-ների կանոնադրությունները համապատասխանեցնելու օրենսդրական նոր պահանջներին: Այսպիսով, Իրավաբանների հայկական ասոցիացիան Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի և ՀՀ-ում անցկացվող Եվրոպայի օրերի շրջանակներում նոր օրենքի լույսի ներքո ՀԿ-ների համար անցկացրեց անվճար դասընթացների առաջին փուլը, իսկ այնուհետև՝ երկրորդը: Դասընթացների ընթացքում տրվեցին մասնակիցներին հուզող հարցերի պատասխանները, լսվեցին նրանց կարծիքները, ինչպես նաև տրամադրվեցին անվճար խորհրդատվություններ: Կարևորելով ՀԿ-ների մասին նոր օրենքը՝ դասընթացավարը միևնույն ժամանակ ներկայացրեց դրանում տեղ գտած որոշ իրավակարգավորումներ, որոնք ՀԿ-ների՝ չիմանալու և չկիրառելու դեպքում կարող են վերջիններիս համար առաջացնել բացասական իրավական հետևանքներ: Խնդրահարույց դրույթներ են ՀԿ-ների վերակազմավորմամբ գրանցման, կամավորական աշխատանքի, անմիջական ձեռնարկատիրական գործունեության հետ կապված խնդիրները: Բացի այդ, ասոցիացիան իր Երևանի և մարզային մասնաճյուղերի միջոցով անվճար խորհրդատվություն է մատուցում, ինչպես նաև ՀԿ-ներին օժանդակում նրանց կանոնադրությունների և այլ իրավական փաստաթղթերի՝ օրենսդրությանը համապատասխանեցման գործընթացում:

Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրն իրականացվում է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի կողմից՝ գործընկերներ՝ «Ագորա Սենթրլ Յուրոփ» ՀԿ-ն (Չեխիա), Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոնի (ՍԻՎԻՏԱԱ), Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի, ՓՄՁ համագործակցության ասոցիացիայի և Հայաստանի համայնքների միության հետ համագործակցությամբ:

Ծրագրի հիմնական նպատակն է մեծացնել Քաղաքացիական Հասարակության Կազմակերպությունների (ՔՀԿ) ազդեցությունը հանրային քաղաքականության մշակման գործընթացում, ինչպես նաև ուժեղացնել Հայաստանում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներուժը՝ ոլորտային կոալիցիաներ կազմելու, կենտրոնական և տեղական իշխանությունների հետ համագործակցությունը զարգացման համար: Ծրագիրը ունի դրամաշնորհային բաղադրիչ, որի շրջանակներում ենթադրամաշնորհներ կտրամադրվեն քաղաքացիական հասարակության կազմակերպություններին և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կոալիցիաներին: Ծրագրի թիրախային ոլորտները 9-ն են, այդ թվում՝ արդարադատությունը, կրթությունը, բիզնեսը:

Իրավաբանների հայկական ասոցիացիան (ԻՀԱ) ստեղծվել է 1995թ.-ին: ԻՀԱ-ի առաքելությունն է նպաստել Հայաստանում իրավունքի գերակայության, ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացմանը, որտեղ բնակչությունը իրազեկ է, իսկ նրա իրավունքները՝ պաշտպանված: Մինչև 2016 թ. փետրվար ամիսը ԻՀԱ-ի անվանումն էր Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա:

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:
Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն
Հեռախոս՝ +37410 54 64 94
Հեռապատճեն՝ +37410 54 64 95

Իրավաբանների հայկական ասոցիացիա
Հասցե Նալբանդյան 7, բն. 2 Երևան, Հայաստան, 0010
Հեռախոս՝ +37410 54 01 99
Հեռապատճեն՝ +37410 58 02 99

Եվրահանձնաժողովը ԵՄ գործադիր մարմինն է: Եվրամիությունն ունի 28 անդամ երկիր, որոնք որոշել են աստիճանաբար կապակցել իրենց նոու-հաուն, ռեսուրսներն ու ուղիները: 50 տարվա ընդարձակման ժամանակահատվածում նրանք միասին ստեղծել են կայունության, ժողովրդավարության ու կայուն զարգացման տարածք՝ պահպանելով մշակութային զանազանությունը, հանդուրժողականությունը և յուրաքանչյուրի անկախությունը: Եվրամիությունը հանձնառու է կիսել իր ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից այն կողմ գտնվող երկրների ու ժողովուրդների հետ: